


ՆԱՎԱՏՈՐՄԻ ԱԴՐԻԱՆ
Ի.Ս.ԲՈՎԱԿՈՎ

ՀԱՅ
ԾՂԱՅԻՆԵՐԸ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՄԵԾ ՊԱՏԵՐԱԳՄՈՒՄ



ՀԱՅՊԵՏՏՈՒՄ

ESS

22.11.1886

1080

Նովառտի ազգիւու
Բ. Ա. ԽՍՀ.Ա.Ռ.

3(47.925)27

Դ - 44

ԱՐԴԻԳԱ Ե 1961 թ.

ՀԱՅ ԾՈՎԱՅԻՆՆԵՐԸ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

A 1602
16921



ՀԱՅԱՍՏԱՆԻ


ԵՐԵՎԱՆ

1946


АДМИРАЛ ФЛОТА И. С. ИСАКОВ
АРМЯНЕ – МОРЯКИ
В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ
ВОЙНЕ

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1946 г.



Նովատորմի ադմիրալ
հ. ս. հսկուն



Մահացու սպառնալիքի առաջին իսկ օրերին, որը կախվեց մեր Հայրենիքի վրա 1941 թ. հունիսի 22-ին, հնչեց Առաջնորդի մարտակոշ ձայնը.

«...Խոսքը վերաբերում է Սովետական Պետության կյանքին ու մահվանը... այն բանին, թե Սովետական Միության ժողովուրդները ազատ պետք է լինեն, թե՝ ընկնեն ստրկության մեջ¹»:

Այդ անմոռանալի օրերին, երբ Ռւկրաինացի, Բելոռուսիացի և Լիտվացի սահմանամերձ պաշտերում արյունահեղ ճակատամարտ սկսվեց հզոր ու նենդ թշնամու դեմ, Սովետական Հայաստանը և նրա ժողովուրդը դեռևս հեռու էին անմիջական վտանգից: Բայց չնայած դրան՝ Հայ ժողովուրդը խորապես ըմբռնեց և զգաց ընկեր Ստալինի այն խոսքերը, որ այդ սպառնալիքը ընդհանուր է ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների համար, որ Հայրենիքի պաշտպանության գործը սովետական բոլոր ազնիվ Հայրենասերների ընդհանուր գործն է և որ «անհրաժեշտ է, որպեսզի սովետական մարդիկ... մոքիլիզացիայի

¹ Ընկեր Ստալինի առաջին ելույթը ուղիուով 1941 թ. հուլիսի 3-ին, Ի. ՍՏԱԼԻՆ, «Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի մասին», էջ 14, Հայպետհրատ, 1943:

ենթարկեն իրենց և իրենց ամբողջ աշխատանքը
վերակառւցեն նոր, ուազմական ձևով, որը թշշ-
նամուն խնայել չգիտել։

Եվ պատմական իրադարձությունների ըն-
թացքը ճշգրիտ նախատեսած ընկեր Ստալինի
այս կոչից ու ցուցումներից անմիջապես հետո
մյուս ժողովուրդների, Միության մյուս ոես-
պուրլիկանների հետ միասին Սովետական Հա-
յաստանը պայքարի ելավիր մարդկանցով՝ Կար-
միր Բանակի ու Նավառորմի մարտիկներով,
Հայաստանյան դաշտերի ու լեռների իր աշխա-
տավորներով, իր ոնեցվածքով, արդյունաբերու-
թյամբ ու աշխատանքով, իր բոլոր մարդկանց
արյամբ և քրտինքով, այդպիսով նշանակալի ա-
վանդ մտցնելով ընդհանուր գործի մեջ, այն վիթ-
խարի ճակատամարտում, որպիսին դեռ չեր տե-
սել պատմությունը։

Ահա թե ինչու, երբ պատերազմի առաջին
փուլի ծանր տարիններից հետո որոշակի դար-
ձակ վճռական շրջադարձը և հեռվում պարզո-
րոշ կերպով գծագրվեց վերջնական հաղթանակի

1 Ընկեր Ստալինի առաջին ելույթը ոպերյով 1941 թ.
հունիսի 3-ին, ի. ՍՏԱԼԻՆ, «Սովետական Միության Հայ-
քենական մեծ պատերազմի մասին», էջ 14. Հայոցեանը, 1943:
6

արշալույսը, ժողովուրդների Առաջնորդը կարող էր գոհունակությամբ հավաստել այն, ինչ նա նախատեսել էր դեռևս երկու և կես տարի առաջ.

«Սովետական Միության բոլոր ժողովուրդները միահամուռ պաշտպան կանգնեցին իրենց հայրենիքին, իրավամբ համարելով ներկայիս Հայրենական պատերազմը բոլոր աշխատավորների ընդհանուր դործը՝ առանց ազգության և դավանանքի խորության... Մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը դիմացավ պատերազմի բոլոր դժվարություններին ու փորձություններին և է՛լ ավելի կոփվեց սովետական բոլոր մարդկանց կողմից ֆաշիստական զավթիչների դեմ մղվող ընդհանուր պայքարում։

Այդ է Սովետական Միության ուժի աղբյուրը»¹:

Այս ընդհանրության, այս բարեկամության հաջողությունը սաղմնավորվեց Հոկտեմբերի մեծ օրերին և Հայաստանի համար վերջնականապես ձևավորվեց 25 տարի առաջ, երբ նա տապալելով դաշնակների լուծը՝ հոժարակամ մտավ Սովետական Միության Ռեսպուբլիկաների մեծ

¹ Ի. ՍՏԱԼԻՆ, «Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի մասին», էջ 127. Հայպետհրատ 1945. 7

բարեկամության մեջ և իրեն ընդմիշտ շաղկապեց
նրա բոլոր ժողովուրդների և առաջին հերթին
ուսւ մեծ ժողովրդի բախտի հետ:

Ահա թե ինչու Հայրենական Մեծ ռատերազ-
մի սկզբին Կարմիր Բանակի և Կարմիր Նավա-
տորմի շարքերում արդեն կային բազմաթիվ հա-
յեր, պրոֆեսիոնալ, կադրային ռազմիկներ ռազ-
մական հիերարխիալի բոլոր աստիճաններում՝
շարքային մարտիկներից մինչև գեներալներ:
Ավելի ուշ, Գերագույն Գլխավոր Հրամանատարի
կոչով ռազմաճակատ եկան դարձյալ հազարավոր
ու տասնյակ հազարավոր սևանցիներ, զարաբաղ-
յիներ, զանգեղուցիներ իրրե առանձին կամա-
վորներ, ապա մարշային համալրում և վերջապես
Հայաստանում կազմված ամբողջ դիվիզիաներ:

Անթառամ փառքով իրենց պսակեցին Կար-
միր Բանակի այդ ռազմիկները բոլոր ռազմաճա-
կատներում: Նրանց քաջություններն ու սխրա-
գործությունները կմտնեն հայ ժողովրդի փառա-
վոր պատմագրության մեջ:

Բայց առանձնապես նշանակալից է հայ ժո-
ղովրդի զավակների մասնակցությունը մեր հայ-
րենիքի պատվի, ազատության ու անկախության

Համար մղված վճռական Ճակատամարտերում՝
Խաղմա-Ծովային Նավատորմի շարքերում:

Նշանակալից է այն պատճառով, որ Հին, նախա-
ռեզլուցիոն ժամանակներում կանխակալ կարծիք
կար, թե Հայերը ծովից հեռու գտնվելով՝ հակում
շունեն դեպի ծովը և ընդունակ չեն այդ դաժան
և առանձնահատուկ ծառայությունը կատարելու:

Այս «թեորիան» ծնվել էր այն մարդկանց
շրջանում, որոնք չգիտեին Հին Հայաստանի
պատմությունը, որ Հայաստանը տիրապետում
էր ծովափնյա երկրներին ու քաղաքներին՝ ընդ-
հուպ մինչև Տրապիզոն: Այս թեորիան հաստա-
տում էին այն շինովնիկներն իրենց մեծապետա-
կան շովինիգմով, որոնք ոչ մի «այլազգի» թույլ
չէին տալիս մոտենալու նավատորմին և որոնց
ծանոթ չէին աշխատասեր, ուազմիկ ու խիզախ
հայ ժողովրդի բնական ընդունակությունները:

Բայց կյանքը հակառակն ապացուցեց:

Ես լավ եմ հիշում, թե ինչպես երբ նոր էի սկը-
սում իմ ծառայությունը Հին նավատորմում և հե-
տաքրքվեցի, թե ո՞ւմ կարող եմ հանդիպել իմ հայ-
րենակիցներից, պարզվեց, որ ո՞չ նավաստիների,
ո՞չ էլ ավագների կամ սպաների մեջ ո՞չ մի հայ չկա:

Հետագայում պարզվեց, որ ամբողջ «կայսե-

բական» նավատորմում միայն մեկ հայ կա՞
սուղանավային սպա, Զ-րդ կարգի կապիտան
Գարսոնը, բայց նա ծառայում էր Բալթիկ ծո-
վում, իսկ ես ընկել էի Հեռավոր Արևելք:

Ես առիթ ունեցա նրան հանգիպելու և ծա-
նոթանալու Հոկտեմբերյան ուկուցիայից հետո,
Լենինգրադում, որտեղ ընկ. Գարսոն արդեն
պրոֆեսոր էր Շովային Ակադեմիային կից
ստորջրյա նավագնացության դասընթացներում:

Իր հայրենիքի այս արժանավոր զավակը, շա-
փականց կրթված ու վերին աստիճանի համեստ
սպան, ուկուցիայի առաջին օրերից թե իրեն և
թե իր գիտելիքները ի սպաս էր որել աշխատավոր
ժողովրդին և մահացավ Լենինգրադում, իր մասին
թողնելով բարի հիշատակ ու ծովայինների հար-
պանքը, պատրաստելով Կարմիր Նավատորմի բազ-
մաթիվ երիտասարդ սուզանավորդներ:

Ուրիշ պատկեր ենք տեսնում մենք այժմ:

Հայաստանի այն զավակները, որոնք նա-
վատորմում ծառայելու հակում էին զգում, Սո-
վետական իշխանության համարյա առաջին իսկ
օրերից հնարավորություն ունեին գնալու իրենց
ընտրած ճանապարհով:

Նվիրվածություն Հայրենիքին, համապատասխան կրթություն, ամուռ առողջություն ու հակում—ահա այն միակ պայմանները, որոնք ցանկացողներին հնարավորություն էին տալիս նավատորմ մտնելու:

Ուրիշ արգելքներ չեն կարող լինել այնտեղ, որտեղ Սովետական Սոցիալիստական ժողովութիկաների Միության կազմի մեջ մտնող բազմաթիվ ժողովուրդների փոխհարաբերությունների հիմքը կազմում է լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը:

Այս քաղաքականության պատուղները մենք տեսնում ենք մեր գործունեության բոլոր ասպարեզներում, այս թվում նուև նավատորմում:

Հանրահայտ է Սովետական Հայաստանի դերը Հայրենական Մեծ պատերազմում, նրա ավանդը մարդկության թշնամիների դեմ պայքարելու ընդհանուր գործում՝ իր բոլոր մարդկացին և նյութական ռեսուրսներով: Նմանապես լավ հայտնի են հայերի հերոսական սխրագործությունները անպարտելի Կարմիր Բանակի շարքերում:

Մենք կուզեինք այնուամենայնիվ ուշադրություն դարձնել միայն հայ ժողովրդի այդ զանքերի մի կողմի վրա՝ նրա զավակների մասնակ-

ցությանը Ռազմա-Ծովային Նավատորմի շարքերում, մեր Հայրենիքի ծովային ռազմաբեմերում:

Հայրենական պատերազմից առաջ ՍՍՌՄ Ռազմա-Ծովային Նավատորմի կադրերի մեջ, այդ բարդ ու դժվարին մասնագիտության համարյա բոլոր ճյուղերում մենք ունեինք հայ ժողովրդի ներկայացուցիչներ:

Ծովային բարձրագույն ուսումնական հաստատություններում, նավատորմի գիտական ինստիտուտներում, դանազան վարչություններում, հիմնարկներում և այլն, մենք ունենք հայ ծովայիններ, որոնք պրոֆեսորներ են, դոցենտներ, դասատումներ, ադմինիստրատորներ, բժիշկներ և ուրիշներ: Դրանք բոլորն էլ իրենց զգալի քաժինն են մտցնում ընդհանուր ջանքերի, ընդհանուր աշխատանքի ու պայքարի մեջ:

Իսկ այժմ ես կուղեի մի քանի օրինակով ցույց տալ այն մարդկանց, ովքեր զենքը ձեռքին, հավատորմի առաջին շարքերում հերոսաբար կովել են գերմանական զավթիչների դեմ և մասմբ իրենց արյամբ հատուցել հաղթության ու կենդանի մնացածների երջանկության համար:

Թերի տվյալների, համաձայն, շհաշված ճա-

պոնական իմպերիալիզմի դեմ պատերազմելու շրջանը, 476 ծովային հայ սպաներ, ավագներ ու կարմիրնավատորմայիններ պարզեատրված են Սովետական Միության շբանշաններով ու մեղալներով: Այս տվյալները շատ բան են վկայում, բայց դեռևս հեռու են ամբողջական լինելուց:

Եթե այս 476 հայ ծովայիններից առանց հատուկ ընտրության վերցնենք ու համառոտակի քննենք միայն 24 կարմիրնավատորմայինների ու սպաների նշանավոր գործերը (դա կազմում է ընդհանուր թվի միայն 5 տոկոսը), ապա կստանանք հետեւյալ պատկերը:

Սովետական Միության կրկնակի հերոս փոխգնդապետ Նելսոն Գեորգի Ստեփանյանը պատերազմի սկզբին գտնվելով Կարմրադրոշ Բալթիկ նավատորմի գրոհային ավիացիայի կազմի մեջ՝ հուժկու հարվածներ էր հասցնում թրշնամուն լենինգրադի մատուցներում:

Պաշտպանելով հերոս քաղաքը, նա գրոհում էր ռազմաճակատի մերձքալթյան հատվածում հարձակվող գերմանական տանկային և մոտոմեքենայացված զորասյուների վրա և ոչնչացնում թշնամու մեծաքանակ տանկեր: Այնուհետև

Հարավում, Սևծովյան նավատորմի ավելացիայի կազմի մեջ Ստեփանյանը մասնակցել է գերմանական պալթիշներից Կովկասը և Ղրիմը աղատագրելու համար մղված մարտերին։ Եվ վերցապես պատերազմի վերջին փուլում նա մասնակցեց Մերձբալթիկայի աղատագրման գործին՝ դարձյալ Բալթիկայի պաշտպանների շարքերում։

Քաջերից քաջի, այդ երևելի մարդու մասին շատ գրքեր կարելի է գրել և պետք է գրել՝ այնքան շատ ուսանելի բան է կապված նրա փառավոր անվան հետ։ Մենք այստեղ մեջ կբերենք մի քանի մարտական դրվագներ միայն։

Ստեփանյանը բազմաթիվ մարտական գործողությունների ղեկավարն էր և կատարողը։ Նա ոմբագրուհային հարվածներ է հասցրել գերմանական նավերին բաց ծովում ու ուղմագործության բազաներում, օդանավակայաններում, մարտկոցներին, տանկերի ու մոտոհետեակի գորասյուններին, թշնամու պաշտպանության առաջավոր գծին և այլ նպատակակետերի։

Ամբողջովին տիրապետելով գրոհիչ ինքնաթիւնին՝ նա բացի գրանից հաջողությամբ օդային մարտեր էր մղում գերմանական ոմբակոծիշների դեմ։

Մեկ անգամ օդում հանդիպելով գերմանաց կան երկու «Յու—88» ռմբակոծիչների, որոնք գնում էին ռմբակոծելու մեր զորքերի դիրքերը, Ստեփանյանը մարտի բռնվեց նրանց հետ (ոչ թե կործանիչով, այլ գրոհայինով) և թնդանոթային դիպուկ կրակով ցած զցեց Հակառակորդի երկու ռմբակոծիչն էլ:

Բայց նրա տարերքը ծովային մարտն էր: Ֆիննական ծովածոցում նա երեան բերեց թշնամու փոխադրանավեր, վայրասլաց թոփշով հարձակվեց նրանց վրա և փոքր բարձրությունից ուրիշ նետեց: Արտակարգ ուժգնություն ունեցող պայթյունից նրա ինքնաթիռը խիստ ցընցվեց: Սաստիկ հարվածից Ստեփանյանը մի ակրնեարթ կորցրեց գիտակցությունը: Ապա ուշքի գալով՝ նա ջրի վրա նկատեց թշնամու 3000 տոննա ջրածավալ ունեցող փոխադրանավի միայն մնացորդները: Պարզվեց, որ գերմանական պայթած փոխադրանավը բեռնված էր ուազմամթերքով:

1942 թվականի մայիսի 23-ին օդային հետախուզությունը հաղորդեց, որ Ֆիննական ծովածոցում ուժեղացել են Հակառակորդի ծովա-

յին փոխադրումները։ Հայտաբերված էր ութ փոխադրանավ, որոնք գնում էին վեց պահականավերի պաշտպանությամբ։ Դեպի թշնամու քարավանը թուավ «Իլ»-երի մի վեցյակ՝ նելսոն Ստեփանյանի ղեկավարությամբ։ Առաջին թոփշքով Ստեփանյանին հաջողվեց վնասել երկու փոխադրանավ։ Նրանք կանգ առան և դանդաղ սուզվեցին։ Գերմանացիները փորձեցին փրկել դրանց և օգնության ուղարկեցին մի քանի մարտանավ։ Սպիտակ գիշերներ էին և գրոհացինները կարող էին գործել օր ու գիշեր։ Հետզհետեւ ուժեղացնելով հարվածները, ոչնչացնելով մոտեցող նավերին՝ Ստեփանյանի գրոհացինները երկու օրում խորտակեցին գերմանական տասնըմեկ նավ։

1942 թվականի աշնանը գերմանացիները կենինգրադին մոտ ավիացիայի զգալի ուժեր էին բերել։ Անընդհատ կենտրոնացված հարվածներով թշնամին ձգտում էր ջլատել շարժումը մեր ճակատամերձ ճանապարհների վրա, խափանել ուղղմամթերքի, պարենի ու համալրման փոխադրությունը։ Մեր հրամանատարությունը, գերմանացիներին հակազդելու համար որոշեց ուժ-

պին հարված հասցնել թշնամու ոմբակոծիչ ա-
վիացիային նրա օդանավակայաններում:

Հետախուզությունը պարզեց գերմանական
ոմբակոծիչների բազավորման շրջանները: Նրանց
հարվածներ հասցնելու համար թուան գրոհային-
ների խմբերը՝ փոխգնդապետ Մորոզովի և կա-
պիտան Ստեփանյանի ղեկավարությամբ: Օդա-
նավակայանում կենտրոնացած էր մոտ երե-
սուն մանր ու միջակ ոմբակոծիչ:

Վարպետորեն օգտագործելով տեղանքի և օ-
դերեկութաբանական պայմանները՝ գրոհայիննե-
րը անակնկալ հայտնվեցին օդանավակայանի
վրա և հարված հասցրին ինքնաթիռներին: Երկ-
րորդ թոփշրին օդաչուները հարվածեցին գերմա-
նական մեքենաների կայանը և թշնամու զենի-
թային միջոցները:

Գրոհի ժամանակ գերմանական մի քառա-
մոտող ոմբակոծիչ գտնվում էր թոփշրադաշտում
և փորձում էր օդ բարձրանալ, բայց ոչնչացվեց
մեր գրոհայինների կրակով:

Այդ նույն օրվա վերջում Մորոզովը և Ստե-
փանյանը նորից իրենց օդաչուներին առաջնոր-
դեցին դեպի թշնամու օդանավակայանը և իս-

կույն ճշտությամբ կանգնեցին նպատակակետի
վրա: Այս անգամ օդանավակայանին մոտե-
նալիս գերմանացիները մեր ինքնաթիռներին դի-
մավորեցին զենիթային տեղատարափ կրակով:
Բայց գրոհայինները իջնելով մինչև նվազագույն
բարձրություն՝ ոռւմբեր նետեցին և նորից սկսե-
ցին թնդանոթներով ու գնդացիրներով գնդակո-
ծել կանգնած ինքնաթիռներն ու նրանց մոտ
պտնվող սպասակազմը: Ոչնչացնելով թշնամու-
մոտ քսան ոմբակոծիչ և պայթեցնելով ուազմա-
մթերքի պահեստը՝ մեր օդաշուները ի շիք
դարձրին Հակառակորդի Հարվածող ուժը և ի-
րենք ոչ մի կորուստ շունեցան:

Հակառակորդի նավահանգիստներից մեկը,
որի վրա Հարձակում գործեց գրոհայինների մի
խումբ Ստեփանյանի գլխավորությամբ, առանձ-
նապես ուժեղ Հակազենիթային պաշտպանու-
թյուն ուներ: Պահանջվում էր ոչ միայն արիու-
թյուն, այլ և մեծ վարպետություն, որպեսզի
կարելի լիներ ճեղքել-անցնել Հգոր կրակի պատ-
նեշը և հաջողությամբ հարվածել թշնամուն:

Վարպետորեն մաներելով՝ Ստեփանյանը մո-
տեցավ նպատակին, ճեղքեց կրակի պատնեշը և

Համարձակ գրոհեց թշնամու վրա: Նա վայրա-
սլաց թռավ մինչև նվազադույն բարձրությունը և
ուռւմբեր նետեց: Նրան հետևող օդաշուները
նույնպես վայրասլաց թռիչք գործեցին և ապա
արագ կերպով դուրս եկան զենիթային կրակի
գոտուց: Այդ թռիչքի հետևանքով խորտակվեցին
երկու արագընթաց դեսանտային բեռնանավ, ո-
րոնք օգնական ուժեր ու մատակարարում էին
հասցնում գերմանա-ֆաշիստական զորքերին:

Մեկ անգամ Ստեփանյանը օդաշուների մի
խմբով հարված էր հասցնում թշնամու փոխա-
դրանավերի ու բեռնանավերի քարավանին, որը
գնում էր դեպի բաց ծովը: Երբ գրոհայինները
մոտեցան նպատակին, գերմանացիներն սկսեցին
մաներել իրենց նավերը՝ զենիթային միջոցները
համախմբելու համար: Ստեփանյանը կոահեց
թշնամու դիտավորությունը և երթից օդաշունե-
րին տարավ գրոհի: Ռմբագրոհային հարվածի
հետևանքով մեր օդաշուները խորտակեցին մեկ
արագընթաց դեսանտային բեռնանավ և մեկ
ցանցանավ:

Լենինգրադի մոտ կատարվող մի պատաս-
խանատու գործողության ժամանակ գրոհային-

ներն առաջադրանք ստացան՝ ապահովել ուղղման
ճակատի զորամասերի գետանցը, որոնք պետք է
գրավեին մյուս ափին գտնվող գերմանացիների
հենակետը։ Հարկավոր էր ձնշել հակառակորդի
կրակակետերը, կազմալուծել նրա պաշտպա-
նությունը և դրանով իսկ օգնել մեր հետևակին
անցնելու գետը։

Նշանակված ժամին երկու խումբ գրոհա-
յիններ Ստեփանյանի և Կարանի առաջնորդու-
թյամբ օդ բարձրացան։ Նպատակակետի վրա
գրոհայինները փակ օղակ կազմեցին և հերթով
վայրառլաց թոշելով գերմանական մարտկոցնե-
րի վրա՝ հարվածներ հասցրին ֆուգասային և
բեկորացին ոռոմբերով։ Նորից ու նորից մոտե-
նալով նպատակակետին՝ գրոհայինները ոչըն-
շացրին հակառակորդի ականանետերը, գնդաց-
րային բները, բլինդաժներն ու խրամատները։

30 Իոպեից ավելի «Ծլ»-երը գտնվում էին
անմիջականորեն գերմանական դիրքերի գլխա-
վերեւում։

Օդաշուների մեջ մասը յոթ անգամ դարձան
դեպի զանազան նպատակակետեր։ Այդ ժամա-
նակամիջոցով կարմիրբանակայիններն ու ծո-

վային հետևակը հաջողությամբ անցան պետք և
դրավեցին թշնամու ամրացված վայրը:

Կարելի է հիշեցնել ևս մի դեպք, երբ Ֆին-
նական ծոցի կղզիներից մեկում հակառա-
կորդի առափնյա մարտկոցները խանգարում էին
մեր զորքերի դեսանտ իջնելուն։ Ստեփանյանը
մի այլ օդանավի հետ օդ բարձրացավ ոմբակո-
ծելու թշնամու մարտկոցները։ Նա շորս անգամ
արշավեց գերմանական մարտկոցների վրա և
ժնշեց նրանց կրակը։ Գրոհայինները նվազա-
գույն քանակությամբ ուղամամթերք ունեին՝ թրշ-
նամու կործանիչներին հանդիպելիս պաշտպան-
վելու համար։ Ստեփանյանի գրոհների ժամա-
նակ մեր նավերը մոտեցան ափին և սկսեցին
դեսանտ իջեցնել։ Բայց թշնամու մարտկոցնե-
րից մեկը նորից սկսեց կրակել նրանց վրա։
Նկատելով այդ՝ Ստեփանյանը իր ընկերակցի
հետ միասին գնաց հինգերորդ գրոհի։ Թեև
ուղամամթերքը ամբողջովին վերջացել էր, բայց
Ստեփանյանը վեցերորդ անգամ թռավ դեպի
թշնամին։ Նա գիտեր, որ գերմանացիները վա-
խենում են գրոհայիններից և քանի դեռ գրոհա-
յինները գտնվում են նրանց ամրությունների

վրա, մարտկոցները չեն համարձակվի կրակ վարել դեսանտի դեմ:

Սրանից էլ օգտվեցին ծովային դեսանտացինները և արագորեն ափ ելան:

Սովետական Միության կրկնակի հերոս փոխգնդապետ Ստեփանյանը իր արծիվներին առաջնորդում էր դեպի կատաղի գոտեմարտեր թշնամու հետ, անխնա հարվածում էր նրան, համառորեն սովորեցնում էր այդ իր ենթականերին և անձամբ ցույց էր տալիս անձնվեր արիության, խիզախության և ռազմական արվեստի նմուշներ: Նա ընկավ մարտում, իր սիրած Բալթիկայի վրա, վերջնական հաղթանակի օրվան չհասած, որի համար այնքան շատ էր աշխատել և հանուն որի նու գոհաբերեց իր կյանքը:

Հյուսիսային նավատորմի ավիագնդերից մեկի կործանիչների օղակի հրամանատար, ավագ լեյտենանտ, ՀամԿ(բ)Պ անդամ էմիլ Մարկոսի Դիլանյանը իրեն ցույց տվեց իբրև լավագույն, ձեռներեց, կամքի տեր ու փորձված կործանիչ օդաշումերից մեկը: Կատարելով 142 մարտական թոփշք, 15 օդային մարտ մղելով՝ Դիլանյանը

անձամբ խփել է թշնամու 4 ինքնաթիռ և թղշնամու դեմ կովելիս ցույց է տվել արիության և ուղղմական հմտության օրինակներ:

Սովետական Անդրբենեռը պաշտպանելով ատելի զավթիչներից, Դիլանյանը հարվածում էր օդում, գրոհում էր դետնի վրա, մեծ վնաս պատճառելով հակառակորդի կենդանի ուժին ու տեխնիկային: Ո՞չ թշնամու փոթորկալի զենիթային կրակը, ո՞չ օդերևութաբանական ծանր պայմանները, ոչինչ հետ չէր կանգնեցնում խիզախ հայրենասեր Դիլանյանին թշնամուն հաղթելու իր ձգտման մեջ:

Ահավասիկ մի օրինակ նրա արիությունից:
1942 թվականի օգոստոսի 5-ին հակառակորդի ինքնաթիռները արևի կողմից մոտենալով՝ գրոհեցին մեր ինքնաթիռների հոյակը: Ֆաշիստների մաները ամենից առաջ նկատեց Դիլանյանը և անմիջապես նետվեց թշնամու վրա: Այդ ժամանակ մի զույգ «Մեսերշմիտներ» գրոհեցին Դիլանյանի ինքնաթիռի վրա: Թշնամու արկը շարդեց անվեճեր օդաչուի ձախ ձեռքը, բայց հայ ժողովրդի արիասիրտ պավակը մի ճարպիկ մաներով փրկեց իր հրամանատարին և

երք Համոզվեց, որ իր ընկերները միանգամայն ապահով են, ցած թուավ վնասված ինքնաթիռից և պարաշյուտով բարեհաջող վայրէջք կատարեց մեր զորքերի դասավորության շրջանում:

Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում իր ցուցաբերած արիության ու անվեհերության համար ավագ լեյտենանտ Դիլանյանը պարգևատրվեց Կարմիր Դրոշի և Կարմիր Աստղի շքանշաններով:

Անձովյան նավատորմի ոմբակոծիչ ավիագնդերից մեկի օդային հրածիգ-ուաղիստ, կրտսեր լեյտենանտ Գրիստափոր Գևորգի Հարուբյունյանը արդեն 1941 թվականի սեպտեմբերի 15-ին 20 մարտական թոփչք էր զործել և ոմբագրոհային հարվածներ հասցրել հակառակորդի կենդանի ուժին, տեխնիկային և ուսումնական օբեկտներին:

1941 թվականի օգոստոսի 10-ին նա մասնակցեց մեր ոմբակոծիչների հաջող հարձակմանը Դանուբի Զերնովոդյան հոշակավոր կամուրջի վրա, որը բացառիկ ուժեղ պաշտպանություն ուներ: Հարությունյանը իր մարտական փառապանծ ընկերների հետ բազմիցս թուել է ուսում-

Ճակատի դիմք, որտեղ մեր ավիացիան զախշախում էր թշնամու տանկերի, ավտոմեքենաների, հրետանու և կենդանի ուժի կուտակումները:

Յդանավախմբի մեջ Հարությունյանը լավագույն մասնագետն էր, նա օգնում էր ընկերներին լավագույն կերպով յուրացնելու մարտական տեխնիկան, իսկ մարտի մեջ նա իր անձնակազմի հուսալի պաշտպանն էր, սքանչելի հրածիգ ու գերազանց ռադիոտ, որն ապահովում է ինքնաթիռի մշտական կապը:

Թշնամու դեմ մղված մարտերում ցուցաբերած խիզախության և ռազմական հմտության համար ընկ. Հարությունյանը պարզեատրվել է Կարմիր Դրոշի շքանշանով:

Դրանք հին, կովկած մարտիկներ էին, ստալինյան բազեներ, որոնք մարտական ծառայություն էին կատարում պատերազմի առաջին իսկ օրերից: Բայց ահավասիկ պատանու, բազեիկի օրինակը, որը պատերազմի չորրորդ տարում միայն հնարավորություն ստացավ շարք մտնելու ընկած հերոսների փոխարեն:

Արիաբար, աներկյուղ ու համարձակ էր

ինքում թշնամուն Կարմրադրոշ Բալթիկ նավաստորմի 35-րդ ավիագնդի երիտասարդ օքաջու, կրտսեր լեյտենանտ Հարուբյուն Սուրենի Փարսուլյանը։ Միայն 1944 թվականի մեկ և կես ամսվա ընթացքում նա մասնակցեց թշնամու նավերին հասցված 12 ոմբագրոհային հարվածներին և իր մարտական ընկերների հետ խորտակեց թշնամու 8 և վնասեց 3 նավ։

Հետագայում համարյա շեղավ մի դեպք որ գրոհայինների այն խումբը, որին մշտապես մասնակցում էր Փարսուլյանը, շնորտակեր ֆաշիստական 2-3 նավ։ Եվ հրաժանատարության բոլոր առաջադրանքները կատարելիս Փարսուլյանը համարձակորեն մարտի մեջ էր մտնում, վճռականորեն հարվածում էր թշնամուն, իր հոգու և կամքի ամբողջ ուժով ձգտելով որքան կարելի է մեծ վնաս պատճառել թշնամու կենդանի ուժին ու տեխնիկային։

Փարսուլյանի խիզախությունն ու արիությունը արժանի գնահատություն ստացան և նա պարգևատրվեց Կարմիր Դրոշի շքանշանով։

Եթե մենք ծովային ավիացիայից անցնենք նավատորմի նավերին ու միավորումներին, ա-

պա այստեղ ևս կտեսնենք Հայ ժողովրդի զա-
վակների ցուցաբերած խիզախության ու ա-
րիության սքանչելի օրինակներ:

Անձովան նավատորմի ցանցարկու դիվիզիո-
նի հրամանատար, ավագ լեյտենանտ Կառլոս
Սարգս Ղուկասյանը 27 տարեկան է միայն,
բայց արդեն փորձված, հին ծովային է: Անձ-
նակայ արիության ու անվեհերության օրինա-
կով նա մշտապես իրեն ենթակա ծովայիններին
տոգորում էր Սոցիալիստական Հայրենիքի թշշ-
նամիների դեմ Հաղթանակ տանելու սխրագու-
ծություններով:

Իրա դիվիզիոնի նավերը մասնակցում էին
թշնամու ծովափի Հրետանային ոմբակոծության:
Բոլոր դեպքերում առաջին ականորս նավի վրա
է Ղուկասյանը: Երբ նավերը գործում են թշնա-
մուց հենց նոր ազատագրված նավահանգստի
ծովախորշում, ապա Ղուկասյանն ամբողջ ժա-
մանակ այդ նավերի վրա անձնական օրինակով
ու ռազմական վարպետությամբ մարտիկներին
ու սպաներին ճիշտ ու հմուտ գործողություն-
ներ է սովորեցնում թշնամու ականների դեմ
պայքարելիս:

Դուկասյանի դիվիդիոնում, չնայած մարտական աշխատանքի բացառիկ վտանգին ու լարվածությանը, ոչ մի մարդու կորուստ չեղավ, չեղան նաև ավարիաներ ու մարտական սեխնիկայի փշացում, որոնք կարող էին լինել սնձնակազմի մեղքով։

Մարտում ցուցաբերած արիության ու ձեռներեցության համար Դուկասյանը պարգևատրված է Նախիմովի 2-րդ աստիճանի ծովային շքանշանով։

Անցնենք մի ուրիշ, ոչ պակաս պատասխանատու մարտական աշխատանքի՝ հակառակորդի սուզանավերի դեմ պայքարելուն։

Կարմրադրոշ Բալթիկ Նավատորմի «ՄՕ» («Փոքրիկ որսորդ») կատերի հրամանատարի օկնական լեյտենանտ Գևորգ Խաչատուրի Իլյարովը հերոսաբար. և հմտորեն կովում էր ֆախտական զավթիչների դեմ։ Դետքի, ուղեկցության, մեր սուզանավերը պաշտպանելու, ականեր որսալու ժամանակ Գևորգը մշտակես դրում էր վարպետորեն և քաջաբար։

1943 թ. Հուլիսի 23-ին կատերը գտնվելով դետքում՝ մարտ էր վարում հակառակորդի շորս

տորպելային կատերների դեմ: Իլյարովը չնայելով թշնամու սաստիկ կրակին՝ հիանալի կերպով ճշտում էր կրակը: Կովի ժամանակ կատերի վրա սպանվեց կարմիրնավատորմային Նիկոլակը, որ ձեռքի գնդացրով կրակ էր վարում թշնամու դեմ: Իլյարովն ինքը վերցրեց գնդացիրը և սկսեց դիպուկ հարվածներ տեղալ գերմանական նավերի վրա: Մարտի վերջում թշնամու մի կատերը խորտակվեց, իսկ մնացածները հեռացան իրենց բազաները:

1944 թ. փետրվարին Իլյարովի կատերը մասնակցեց թշնամու ափը դեսանտ իջեցնելուն: Հակառակորդը հրետանային ու ականանետային ինտենսիվ կրակ կենտրոնացրեց կատերի վրա, որի ընթացքում վառվեց ուսղմապաշարը և ստորջրյա մասում ձեղք առաջացավ: Իլյարովը վարպետորեն ու արիաբար ղեկավարելով անձնակազմը՝ կազմակերպեց հրդեհի մարումը և ձեղքի փակումը:

1944 թ. մայիսին գերմանական 28 ինքնաթիւներ փորձում էին ոչնչացնել այն նավախումբը, որոնց մեջ էր նաև Իլյարովի կատերը: Հմտորեն ղեկավարելով անձնակազմը և վարե-

լով հրետանա-գնդացրային կրակը՝ իլյարովը
պաշտպանողական ուժգին կրակ ստեղծեց և
հնարավորություն շտվեց թշնամու ինքնաթիռ-
ներին նշանոցով ոմբակոծելու։ Կատերի կրա-
կով ցած զցվեց մեկ ինքնաթիռ և վնանվեց մի
ուրիշը։

Արիության, տոկունության և մարտերը
վարպետորեն ղեկավարելու համար իլյարովը
պարզեատրվեց Կարմիր Աստղի և Հայրենական
պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով։

Անձովյան նավատորմի «Կարմիր Արխա-
գիա» հրետանավակի ղենիթային հրանոթի հրա-
մանատար 2-րդ աստիճանի ավագ Վարդան Ե-
ղիշեի Կոբելյանը գերմանական զավթիչների
դեմ մղված կոփվներում վարպետորեն ղեկավա-
րում էր իր մարտիկներին։ Նրա հրանոթը ա-
րագորեն կրակ էր բացում թշնամու ինքնաթիռ-
ների վրա և խափանում նրանց գրոհները նավի
վրա։ Մեկ անգամ, 1942 թ. հունվարին հրետա-
նավակի վրա վայրասլաց թոշիք գործեցին թշ-
նամու հինգ «Յու-88» ինքնաթիռ։ Կոբելյանի
հրանոթի ինտենսիվ կրակը հնարավորություն
շտվեց գերմանական ինքնաթիռներին նշանոցա-

յին ոմբակոծություն կատարելու; Նավի վրա ոչ
մի ոռոմք չընկավ:

Շուտով հրետանավակի վրա հարձակվեցին
12 «Յու—88» և «Հենկել» ինքնաթիռներ: Կոբե-
լյանն իր ենթակաների հետ կազմակերպելով փո-
խադրական կրակ՝ թշնամու ինքնաթիռներին շե-
ղեց մարտական ընթացքից: Հակառակորդը
ոռոմքերը նետում էր նավից շատ հեռու: Բոլոր
մարտական գործողությունների ժամանակ, ա-
շալրջության և աշխատանքի պարզության շնոր-
հիվ, Կոբելյանի հրանոթը միշտ առաջինն էր
կրակ բացում թշնամու վրա և դիպուկ հարվա-
ծում նրան: Կոբելյանը պարզեատրված է «Խի-
դախության համար» մեղալով:

Ն կատերային ցանցանավի ավագ կար-
միրնավատորմային, ՀամլկեՄ անդամ, Նիկոլայ
Սողոմոնի Կուպրիանովը մասնակցել է Ստալին-
գրադի հերոսական պաշտպանությանը և մար-
տական աշխատանք է կատարել Վոլգայի վրա:
Նա առանձին հմտություն ու վարպետություն
ցուցաբերեց Սև ծովում, ականորսական ծառա-
յություն կատարելիս: Զինայելով իր ուժերը,
աշխատելով լարված պայմաններում, հիանալի

մի՞րապենելով՝ իր մասնագիտությանը՝ Կուպէ-
րիանովը իր բացառիկ հատակ մարտական աշ-
խատանքով՝ նպաստում էր ականորսական աշ-
խատանքների հաջող կատարման:

Կուպրիանովի կատերցանցանավը՝ անցել է
մոտ 2000 ականորսական մղոն տարածություն՝
միշտ էլ ճշգրտորեն կատարելով մարտական ա-
ռաջադրանքները։ Կուպրիանովի կուրծքը զար-
դարված է կարմիր Աստղի շքանշանով։

Դանուբի ռազմական նավատորմիկի գվար-
դիական դիվիզիոնի զրահակատերի կոմենդոր
գվարդիայի կարմիրնավատորմային, Համեկեմ
անդամ, Սարգս Հմայակի Բարսեղյանը Ժերմիա-
նի գյուղի մոտ դեսանտային գործողության ժա-
մանակ հրանոթային դիպուկ կրակ էր վարում
թշնամու դեմ։ Նրա հրանոթով ոչնչացվեց հակա-
ռակորդի մի քանի տասնյակ դինվոր։

Կատերը դեսանտայիններով ափին մոտե-
նալիս Բարսեղյանը թշնամու ուժգին կրակի
տակ ցատկեց ջրի մեջ, ճարպիկ կերպով սան-
դուղք կառուցեց և այդպիսով արագացրեց դե-
սանտի ափ իջնելը։ Այնուհետև նա դիպուկ կրա-
կով պաշտպանում էր դեսանտային գործողությու-

նը: Անցնելով Ն. Քիլիա (Դանուբի ափին), նա
կովի ժամանա դերի վերջը 14 դերմանական
զինվոր:

Բարսեղյանը պարգևատրված է քաջարի ծո-
վակալ Նախիմովի հիշատակին հաստատված մե-
դալով:

Սևծովյան նավատորմի Կերչի Ռազմա-Ծո-
վային բազայի Ն դեսանտային նավակի մռ-
տորիստների ջոկի հրամանատար կարմիրնավա-
տորմային Արամայիս Սողոմոնի Հարությու-
նյանը իրեն հանձնարարված մեխանիզմները
մշտապես պահպանում էր կատարելապես սարքին
և մարտական պատրաստության մեջ: Թշնամու-
ղեմ մղված մարտերում նա միշտ եղել է համար-
ձակ ու վճռական: 1944 թ. փետրվարին մոտո-
նավակը զբաղված էր մեր տենդերներից մեկը
հանելով, որ ընկած էր թշնամու ափի մոտեր-
քում քարերի վրա: Այս գործողության ժամա-
նակ մոտոնավակի թիավարման պտուտակի վրա
փաթաթվեց պողպատաթոկը, որից նավակը
կանգ առավ: Այն ժամանակ Հարությունյանը ի-
րեն նետեց սառը ջրի մեջ և այնտեղ աշխատեց
30 րոպե (շմոռանանք, որ դա փետրվա՛ր ամիսն

էր): Կտրիճը պտուտակն աղատեց թոկից և դրանով ապահովեց մարտական առաջադրանքի կատարումը:

Հարությունյանի ղեկավարությամբ մոտուիստների գերազանց աշխատանքը թշնամու ականները հավաքելու ժամանակաշրջանում, սկսած 1944 թ. փետրվարի 15-ից մինչև մարտի 27-ը, ապահովեց 14 ականի և 15 ականակալների ոչնչացումը:

Հրամանատարությունը Հարությունյանին պարզեատրել է Կարմիր Աստղի և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շրանշաններով:

Բայց մեր մազմա-Ծովային նավատորմի կազմի մեջ, բացի ծովային ավիացիայից ու նավերից, մտնում է նաև Առափնյա Պաշտպանությունը, որը բոլոր ծովերում պաշտպանում է մեր նավահանգիստները, բազաներն ու ափերը: Տեսնենք թե ինչ են արել Հայաստանի զավակները այս ասպարիզում:

Երկաթուղային մարտկոցի (Բալթիկայում) Հրետանային կայանի հրամանատար, ՀամԿ(Բ)Պ անդամ, ավագ լեյտենանտ Հռվիաննես Լազարի

Արուցյանը ֆաշիստների դեմ մղված մարտերում իրեն ցուցաբերել է իբրև քաջ, աննկուն ու ձեռներեց հրամանատար: Թշնամու դեմ մարտական կրակ վարելով՝ նրա տրանսպորտյորը ճնշել է թշնամու 6 մարտկոց, զախչախել է ուաղմամթերքով լի 10 ավտոմեքենա, խորտակել է դիմադրության 3 հանգույց, ոչնչացրել է այն շենքը, որտեղ գտնվում էր գերմանական դիվիզիայի շտաբը և մի այլ շենք, որտեղ հիմնված էր թշնամու հրամանատարական կետը:

Արուցյանը պարզեվատրված է «Մարտական ծառայությունների համար» մեդալով:

Նույն Բալթիկայում գվարդիական մարտկոցի հրամանատար, ՀամԿ(թ)Պ անդամ, ինժեներմայոր Արմենակ Հովհաննեսի Հակոբյանը լենինգրադի մոտ հմտորեն ղեկավարում էր անձնակազմի մարտական գործողությունները և վարպետորեն ուղղություն տալիս իր մարտկոցի կրակին: Այս մարտկոցի կրակով դգալի վնաս է հասցված թշնամուն: Յուրաքանչյուր կրակոցից հետո թշնամու բանակատեղում մեծ հրդեհներ ու պայթյուններին էին առաջանում: Ճանապարհների հանգույցներին մարտկոցի հասցրած դիպուկ

Հարվածով թշնամին պրկվեց իր ռեղերվները ծովափնյա խճուղով տեղափոխելու հնարավորությունից: Պաշտոնապես արձանագրված է, որ Հակոբյանի մարտկոցը 23 դեպքում ձնշել է ֆիննական մարտկոցների կրակը:

Հակոբյանի ղեկավարությամբ անձնակազմը հմտորեն հակամարտկոցային կրակ էր վարում, արագ կերպով հայտաբերում թշնամու կրակող մարտկոցները, և այդպիսով դյուրացնում մեր բանակի ու նավատորմի մարտական գործողությունները:

Մարտական գործողություններում արիություն ու խիզախություն ցուցաբերելու համար Հակոբյանը պարզեատրված է Կարմիր Աստղի և Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով:

Առավինյա ջոկատի ուղիոհեռագրիչների խմբի ավագ, Համեկ(բ)Պ անդամ, ավագ սերժանտ Արմենակ Ահարոնի Հայրապետյանը իր ուղիողիտողություններով պարզել է գերմանական 20 օդանավակայանի տեղը: Նա երկան է բերել թշնամու ավիացիայի 45 ինքնաթիւութուիչը դեպի մեր նավահանգիստները, նա-

վատորմիկի բազաներն ու առափնյա շրջանները, որով կանխել է թշնամու հարձակումների անակնկալությունը: Իր հմտության և աշալքության շնորհիվ ընկ. Հայրապետյանը կարողացել է ի հայտ բերել գերմանական օդանավակայանների ռադիոկայանների խոսակցության սիստեմը և պայմանական ազդանշանները:

Այս նուրբ ու ճշգրիտ աշխատանքի համար ընկ. Հայրապետյանը պարգևատրված է «Մարտական ծառայությունների համար» մեդալով:

Սև ծովի հրետանալին դիվիզիոնի էլեկտրիկապավորների խմբի ավագ, ավագ սերժանտ Սիմեոն Խանիակի Գաբրիելյանը 1941—42 թ. Սևաստոպոլի պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ լինելով հետախույզ դասակի հրամանատարի օգնական, քաջաբար և խիզախորեն կատարում էր մարտական առաջադրանքները, հաճախ էր պնում հետախուզության, արժեքավոր տեղեկություններ էր բերում հակառակորդի մասին, բազմիցս էլ գերիներ: Սևաստոպոլի պաշտպանության վերջին օրերին մի խումբ մարտիկների հետ Գաբրիելյանը վարպետորեն կազմակերպեց թշնամու

գերազանց ուժեղի դեմ Հակագրո՞ջը, իսկ հետո
դինապաշտի տեղափոխումը: Իր դասակի հետ
նա գտնվում էր ամենավտանգավոր տեղերում
ու հետ մղում Հակառակորդի կատաղի գրո՞ջը,
դիպուկ կրակով ոչնչացնում էր ֆաշիստներին
և երբ վիրավորվեց՝ մարտադաշտից չհեռացավ:

Գաբրիելյանը պարզեատրված է «Սևաստո-
պոլի պաշտպանության Համար» մեղալով և
Կարմիր Դրոշի շքանշանով:

Աև ծովի Դիտողության ու Կապի ծառա-
յության պահակակետի պետ, ՀամԿ(բ)Պ ան-
դամ, 2-րդ աստիճանի ավագ Հրանտ Առաքելի
Գասպարյանը իր պարտականությունները կա-
տարելիս ցուցադրել է արիություն և անձնը-
վիրություն: Պահակակետի շրջանում Հակառա-
կորդի ինքնաթիռները զանազան ժամանակ նե-
տել են մոտ 800 ոռումք: Գերմանական կործա-
նիչներն ու ոմբակոծիչները մի քանի անգամ
պահակակետը ոմբակոծել են գնդացիրներով ու
թնդանոթներով: Զնայած սրան, Գասպարյանն
իր անձնակազմով մնում էր տեղում, շղադարեց-
նելով հսկումը:

Մեկ անգամ թշնամու 24 ոմբակոծիչ պա-

Հակակետի մոտ կանգնած կատերների վրա 84
ռումբ նետեցին։ Կյանքը վտանգի ենթարկվե-
լով՝ Գասպարյանն իր մարտիկների հետ կա-
տերներից հանեց 20 վիրավոր կարմիրնավա-
տորմային ու սպա և նրանց ցույց տվեց առա-
ջին բժշկական օգնությունը։

1942 թվականի օգոստոսի 31-ին, երբ պա-
հակակետը շրջապատված էր հակառակորդի ավ-
տոմատավորներով, Գասպարյանը երկու կար-
միրնավատորմայինի թողեց դիտել ծովն ու
օղը, իսկ ինքը չորս կարմիրնավատորմային-
ներով մարտի բռնվեց թշնամու հետ։ Զնայած
գերմանացիների թվական գերակշուռթյան՝ պա-
հակակետի անձնակազմը Գասպարյանի հրա-
մանատարությամբ արիաբար հետ մղեց թշնա-
մու ավտոմատավորների գրոհները, առանց նա-
հանցելու դիմացավ այնքան ժամանակ, մինչև
որ ստացվեց էվակուացման հրամանը։

Գասպարյանը պարդեստրված է կարմիր
Աստղի շքանշանով։

Հայրենական պատերազմում առանձնապես
հռչակվեց ծովային հետևակը՝ ափին կատարած
իր համարձակ դեսանտներով ու գործողություն-
ունեցած առաջնահանությամբ։

ներով, որի մասին բազմիցս հիշատակված է Գերագույն Գլխավոր Հրամանատարի հրամաններում: Պարզվում է, որ այստեղ ևս հայ մարտիկները ցուցաբերել են իրենց սխրագործությունները:

Հյուսիսային նավատորմի Շովային հետեւակի 12-րդ բրիգադի հետախույզը դասակի հրամանատար կրտսեր լեյտենանտ Արկադիյ Արարովիչ Ավագյանը հետախույզը ջոկատների կազմում մասնակցել է մեր Հյուսիսի համար մղված մարտերին:

Հետախույզական գործողություններից մեկի ժամանակ Ավագյանի դասակը առաջատարն էր և առաջինը մարտի բռնվեց հակառակորդի հետ: Գործելով ավտոմատով ու նոնակներով՝ Ավագյանը թափանցեց թշնամու ավտոպարկի մեջտեղը և անձամբ ոչնչացրեց տասից ավելի գերմանական գինվոր ու սպա: Հետագայում, այդ գործողության ժամանակ նա ոչնչացրեց Յ ավտոմեքնա: Մի այլ գործողության ժամանակ, հրամանատարության առաջադրանքով, ընկ. Ավագյանն իր մարտիկների հետ գերազանցորեն կատարեց

ուազմավարային արկերն ու լաֆետները ափի
հասցնելու հրամանը:

Ավագյանը պարզեատրված է Կարմիր Աստ-
ղի շքանշանով:

Նույն Անդրբենում Շովային Բրիդաղի
գնդացրային վաշտի ջոկի հրամանատար
ՀամԿ(բ)Պ անդամ, դլս. ավագ Մանուկ
Գրիգորի Մազմանյանը 1942 թվականի մա-
յիսյան դեսանտային գործողության ժամա-
նակ ցուցաբերեց անվեհերություն ու խիզախու-
թյուն, որի համար պարգևատրվեց «Խիզախու-
թյան համար» մեդալով: Իինելով պաշտպանու-
թյան առաջին դժի վրա, մարտական պաշտպա-
նության կազմում նա բազմիցս ձնշել է գերմա-
նական գնդացրորդների կրակը:

1944 թվականի հոկտեմբերի 18-ին նորվե-
պական սահմանի մոտ դեսանտային գործողու-
թյան ժամանակ Մազմանյանը ափի իջավ և
առաջինը տեղավորեց գնդացիրը՝ հաջողությամբ
ապահովելով մեր զորամասերի հետագա ափհա-
նումն ու մարտակարգով ծավալումը: Իր ջոկի հետ
Մազմանյանը արագ ցատկով առաջ գնաց, պա-
րանների միջոցով իր գնդացիրը բարձրացրեց

ժայռի վրա, հաղթահարեց սեպածեւ զառիվայրը, իր գնդացիրը դրեց գերմանացիներից 400 մետր հեռավորության վրա և կրակով ճնշեց թշնամու գնդացրային կետը։ Հակառակորդի կրակային դիրքը ճնշելիս, Մազմանյանի ջոկը ոչնչացրեց դարձյալ Յ կրակակետ։

Այս գործողության ժամանակ ցուցաբերած արիության ու խիզախության համար Մազմանյանը պարփակատրված է Կարմիր Աստղի շքանշանով։

Սկզբան նավատորմի Շովային Բրիգադի գնդացրորդ, Հ-րդ աստիճանի ավագ Խաշտուր Արտեմի Բակունեցը նովորոսիյսկ քաղաքի պատմական մարտերի ժամանակ 1943 թ. սեպտեմբերի լույս 11-ի գիշերը Ածխային նավամատույցում ափ իջնելով, հմտորեն ճնշեց թշնամու կրակակետերը։ Ակումբի շենքի մերձակայքում պաշտպանության մեջ գտնվելով՝ Բակունեցը իր գնդացրով ոչնչացրեց թշնամու 10 զինվոր ու 1 սպա և ճնշեց Հակառակորդի 6 կրակակետ։ Չորս օր շարունակ արիաբար հետ մղելով թշնամու տանկերի ու հետևակի կատաղի հակագրուները՝

նա ծանր վիրավորվեց, բայց մարտադաշտից չհեռացավ:

Բակունեցը պարզեատրվել է Կարմիր Աստղի շքանշանով:

Այդ նույն հերոսական գործողության միջոցին, սեպտեմբերի լույս 10-ի գիշերը, կրտսեր սերժանտ Արուստամ Սամվելի Դավթյանը դեսանտային վաշտի հետ կատերով հակատանկային հրացաններ էր տանում: Երբ կատերը մոտեցավ ափին, թշնամին գնդացրային սաստիկ կրակ բացեց: Դավթյանը առաջինը թռավ ափ և ՊՏՄ-ով ոչնչացրեց հակառակորդի գնդացրային կետն ու 4 դինվոր: Այնուհետև ափին մղված կոխվներում Դավթյանը ոչնչացրեց թշնամուդարձյալ մեկ գնդացրային կետ և նոնակներ նետեց հակառակորդի դզօտ-ի մեջ:

Հակառակորդի հետևակի ու տանկերի խոցոր ուժերի գրոհները հետ մղելիս, Դավթյանը, ծանր վիրավոր վիճակում, խորտակեց գերմանական մի ավտոմեքենա և ոչնչացրեց մոտ 20 ֆաշիստ:

Կրտսեր սերժանտ Դավթյանը պարզեատրվեց

Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով:

Հյուսիսային նավատորմի Ծովային հետևակի Ն գնդի հետախռույզ ջոկատի հրամանատար սերժանտ Էղվարդ Էղվարդի Բաբաջյանը գիննական լիինախամբի նավահանգիստն ու բաղան գրավելիս, 1944 թվականի հոկտեմբերի լույս 14-ի գիշերը գործում էր ծովայինների մի ջոկատով:

Իշնելով թշնամու գրաված և կատաղորեն պաշտպանվող ափը՝ Բաբաջյանն իր ջոկով գրուհեց թշնամու հրանոթը և անձամբ ավտոմատով ու նոնակներով ոչնչացրեց հակառակորդի հրանոթի անձնակազմը, որով օժանդակեց մեր ջոկատին գրավելու ամբողջ հենակետը՝ նրա վրա դրված 210 միլիմետրանոց ծանր մարտկոցով:

Հոկտեմբերի 14-ի ցերեկվա կովում նրա ջոկի մարտիկները ոչնչացրին գերմանացիների գնդացրային անձնակազմը, գրավեցին գնդացիրը և դրանով էլ կրակ բացեցին նահանջող հիւլերականների վրա:

Այս կովում Բաբաջյանը անձամբ ոչնչացրեց 10-ից ավելի գերմանական զինվոր և այնպես

Հմտորեն ղեկավարեց իր ջոկը, որ նա կորուստ չունեցավ:

Մարտերում ցուցաբերած անվեհերության, արիության ու վարպետության համար Բաբաջյանը պարզեցարված է Կարմիր Աստղի շքանշանով:

Սևծովյան նավատորմի Ծովային Հետևակի Առանձին Բրիգադի 1-ին վաշտի ականանետային անձնակազմի հրամանատար, Համկ(բ)Պանդամ, սերժանտ Վաղարշակ Պետրոսի Բաղալյանը մասնակցել է Օդեսայի, Սևաստոպոլի, Նովորոսիյսկի հերոսական պաշտպանությանը, ինչպես նաև բազմաթիվ դեսանտային գործողությունների:

1944 թվականի օգոստոսի 24-ի գիշերը գտնվելով ծովային դեսանտի կազմում՝ Բաղալյանն իր անձնակազմով առաջինն իջավ հակառակորդի գրաված ափը և ականանետի կրակով ձնշեց թշնամու երկու գնդացրային կետ, շարքից հանեց հիտլերականների 76մմ թնդանոթի և 45մմ հրանոթի անձնակազմերը:

Այդ կովում նրա անձնակազմի մարտիկները ականանետով ոչնչացրին թշնամու 50 զինվոր ու սպա: Երբ Բաղալյանը նկատեց, որ սո-

դալով իրեն են մոտենում 18 ֆաշիստ, թողեց
որ մոտենան, ապա նոնակներ նետելով ոչըն-
շացրեց 11 գերմանացի, իսկ մնացած 7-ին գե-
րի վերցրեց: Թշնամու հակագրո՞հի ժամանակ Բա-
դալյանը գտնվելով պաշտպանության առաջին
գծի վրա՝ ամբողջ հասակով կանգնեց և գոշե-
լով «Հանո՞ւն Հայրենիքի, Հանո՞ւն Ստալինի»,
առաջ նետվեց և նոնակներ տեղաց գերմանացի-
ների հարձակվող զորասյան վրա: Հիտլերական-
ները նահանջեցին՝ մարտի դաշտում թողնելով
մոտ 20 դիակ:

Բադալյանը պարգևատրված է Կարմիր
Աստվի շքանշանով:

Մեծովյան նախատորմի Ծովային հետեակի
Ն բրիգադի 4-րդ դումարտակի հետախույզ,
կարմիրնավատորմային Կարաքետ Հարույու-
նի Նահապետյանը 1942 թվականի հունվարի
18-ին գտնվելով հետախուզության մեջ՝ առաջինն
ինքը մոտ սովոր հակառակորդի 50 մմ ականա-
նետային մարտկոցին, նոնակներ տեղաց նրա
վրա և շարքից հանեց մեկ ականանետ և նրա
անձնակազմը: Մնացած երկու ականանետներից
Նահապետյանը կրակ բացեց խուճաղահար

փախող ֆաշիստների դեմ: Արանից հետո նա սովաց դեպի թշնամու ԴջօՏ-ը, նոնակներ շպրտեց նրա մեջ, ապա թռավ խրամատը և ձեռնամարտում ոչնչացրեց 5 ֆաշիստ: Գրավելով ԴջօՏ-ը՝ նա կրակ քացեց այնտեղ գտնված հաստոցային գնդացրից և ոչնչացրեց ավելի քան 40 գերմանացի ևաւ:

Հրաման ստանալով դուրս գալ մարտից և հետ դառնալ, Նահապետյանը կովի դաշտից դուրս բերեց մեկ վիրավոր կարմիրնավատորմային և թշնամու մեկ ականանետ:

Նա պարգևատրված է Կարմիր Աստղի շքանշանով:

Մեծովյան նավատորմի Ծովային Հետեակի Առանձին Բրիգադի հետախուզ, Համբկելյան, Կարմիրնավատորմային Ալեքսանդր Գրիգորի Վարդապետյանը 1943 թ. օգոստոսին նովորոսիյսկի մոտ Բեղիմյանովկա գյուղի շրջանում ծովային դեսանտ իջեցնելու ժամանակ գտնվում էր կապիտան Կոտանովի ջոկատում: Նա առաջինը ցատկեց ափ, մտավ թշնամու դասավորության մեջ, երթում ոչնչացրեց 2 հիտերական, և հետագա երկու ժամվա ընթացքում

սպանեց 6 զինվոր, պայթեցրեց 2 ավտոմեքենա ու ռազմական բեռով, 3 սայլ պարենով և դերի վերցրեց 1 ֆաշիստ զինվոր:

Կարմիրնավատորմային Վարդապետյանը պարգևատրվել է «Խիզախության համար» մեդալով:

Մայոր Կունիկովի ղեսանտային ջոկատի մարտիկ, կարմիրնավատորմային Վաղարշակ Թաղեսրի Գիշյանը 1943 թ. փետրվարի 4-ին նովորոսիյսկի մոտ ղեսանտային գործողություն կատարելիս ջոկի կազմի մեջ հանդուզն ցատկով գրավեց Ստանիչկա գյուղի ծայրին դժոնվող 3 տուն և հետ մղեց ֆաշիստների ավտոմատավորների 2 գրոհ։ Այս անվեճեր կարմիրնավատորմայինը 5 մարտիկների հետ ներխուժեց Ստանիչկա գյուղը և նոնակով ոչնչացրեց 5 հիտլերական Բացի դրանից, այդ կովում Գիշյանը փրկեց իր հրամանատարի կյանքը։

Ջոկի կազմում նա գտնվելով պաշտպանության մեջ՝ հետ մղեց թշնամու ավտոմատավորների դասակի 4 գրոհը, դրանցից անձամբ սպանելով 3 ավտոմատավոր։

1943 թվականի փետրվարի 6-ին, գերեզմա-

նատան շրջանում, մեր հարձակման ժամանակ Գիշյանը կարմիրնավատորմայինների ջոկի հետ ոչնչացրեց հակառակորդի 3 ԴջօՏ, որից հետո առաջինը ներխուժեց մնացած ԴջօՏ-ը և նոնակով ոչնչացրեց 5 գերմանական դինվոր: Անվեհերության ու խիղախության անձնական օրինակով նա մարտիկներին ոգեսրում էր սխրագործության, որի համար արժանացավ Կարմիր Աստղ շքանշանի:

Ահավասիկ պանծալի անունների ու հերոսական արարքների շատ կարճ ու չոր մի թվարկություն: Այս թվարկությունը մեկ հարյուրերորդական մասն էլ չի այն բանի, ինչ կարելի էր գրել հայ ծովայինների սխրագործությունների մասին¹⁾: Բայց որքա՞ն շատ բան է ասում այս թվարկությունը:

Եթե վերլուծենք այստեղ բերված թվականները, վայրերը, մասնագիտություններն ու գործողությունները, որոնք վկայում են միայն այս

1) Պետք է հուսալ որ գըղներից որևէ մեկը հանձն կառնի այս շնորհակալ աշխատանքը և կկազմի հայրենական Մեծ պատերազմում հայ ծովայինների մասնակցության հանգամանորեն շարտղրված տարեգիրը:

Հայաստանցիներին, ապա ակամայից կհանգենք հետևյալ եղբակացություններին:

1. Սովետական Հայաստանի լավագույն զավակները լարված աշխատել, հերոսաբար մարտնչել և հաղթել են բոլոր ծովային ու գետային ռազմաբեմերում:

Բեեռագծից այն կողմ, Բարենցի ծովի դաժան ու սառը ջրերում, Մև ծովի ավաղանում և առափնյա շրջաններում, վերջապես Ստալինգրադի մոտ Վոլգայի վրա և Իզմայիլի ու Բուղապեշտի մոտ Դանուբի վրա—ամենուրեք, որտեղ պահանջել է Հայրենիքը, մյուս ժողովուրդների հետ միասին եղել են նաև Սովետական Հայաստանի նեկայացուցիչները¹⁾:

Նրանք ոչ միայն պաշտպանում էին մեր բոլոր ծովերն ու անընդգրկելի Սովետական Միության ծովային սահմանները, այլև նետապնդում ու ջախջախում էին թշնամուն նրա տերրիտորիայում, նրա որջում:

1) Ճապոնական ազրեսորի դեմ մղված մարտական գործողություններում Խաղաղօվկիանոսյան նավատորմի և Ամուրի Կարմրադրոշ նավատորմիկի կաղմի մեջ նմանապես մասնակցում էին հայ ծովայինները:

Անմոռանալի հիշատակ թողած Նելսոն Ստեփանյանը վերջին անգամ գերմանական նավերն էր խորտակում այն ժամանակ, երբ մարտեր էին մղվում Քյոնիգսբերգի համար:

Եթե մենք գնահատում ու հարգում ենք նրանց, ովքեր վտանգի ենթարկելով իրենց կյանքը հերոսաբար պաշտպանում էին անմիջականորեն իրենց տունը, իրենց օջախն ու ընտանիքը, ապա է՛լ ավելի պետք է սիրենք ու ըստ աժանվույն գնահատենք նրանց, ովքեր առանց երկար մտածելու արյունահեղ մարտի մեջ էին մտնում իրենց տնից 2—3 հազար կիլոմետր հեռու, եղրայրական ռեսպուբլիկաների հողում՝ պաշտպանելով ընդհանուր գործը, ընդհանուր ունեցվածքը։ Ահա սա է հայրենասիրության բարձրագույն ձևը, սովետական հայրենասիրության, որով մեզ դաստիարակել են և ենինն ու Ստալինը։ Սա նույնպես անխախտ է, ինչպես այն, որ ոռուների, ուկրաինացիների, բելոռուսների և Միության մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հերոսությունը կատարվում էր հանուն հաղթանակի ընդդեմ ընդհանուր թշնամու, ի եր-

զանկություն բոլորի, այս թվում նաև հանուն հայ ժողովրդի անկախության և ազատության:

2. Այս նույն թվարկությունից երևում է, որ չկա նավատորմում զորքի, զենքի կամ մասնագիտության մի տեսակ, որտեղ հայ ծովայինները ակտիվ մասնակիցներ, իրենց գործի սքանչելի վարպետներ չինեին:

Ծովային ավիացիա (գրոհայիններ, կործանիչներ, ռմբակոծիչներ),

Նավատորմի նավեր (թնդանոթակիրներ, ցանցարկուներ, ցանցարկու կատերներ, զրահակատերներ, սուզանավերի որսորդներ, դեսանտային նավեր),

Առափնյա պաշտպանություն (երկաթուղային հրետանի, դիտողություն ու կապի ծառայություն, ռադիո-հետախուզիչ ջոկատներ),

Ծովային հետևակ (դեսանտային զորամասեր, հետախուզիչ ջոկատներ, դաշտային զորամասեր, ՊՏԲ խմբեր):

Ամեն մի տարերքի մեջ՝ ծովում, օդում ու ցամաքում հայ սպաներն ու կարմիրնավատորմայինները այս բարդ, կատաղի և արյունահեղ

պատերազմում գտնվեցին ժամանակակից պահանջների բարձրության վրա:

3. Այն խորապես տեխնիկական և խիստ բարդ օրգանիզմը, որպիսին արդի ռազմածովային նավատորմն է, հաջողությամբ կարելի է դործել միայն աշխատանքի բաժանման, այսինքն ֆունկցիաները զանազան մասնագիտությունների միջև բաժանելու պայմանով, որոնք օրգանապես կապված են միմյանց և լրացնում են իրար:

Եվ ահա միայն հիշատակված 24 երեելի անուններից մենք կարող ենք արձանագրել.

ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ — օդաչու և ավտամասի հրամանատար,

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ — հրածիգ-ռազիստ,

ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ — նավախմբի հրամանատար,

ԻԼՅԱՐՈՎԻՆ — նավի հրամանատարի օգնական,

ԿՈԲԵԼՅԱՆԻՆ — զենիթավոր,

ԿՈՒՊՐԻՄՈՎԻՆ — ականաձիգ,

ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ — կոմենդոր,

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ — մոտոռիստ,

Ա.ՐՈՒՅՅԱՆԻՆ — երկաթուղային հրետանա-
վոր,

Հ.ԱԿՈԲՅԱՆԻՆ — երկաթուղային հրետանու-
ինժեներ:

Հ.Ա.ՅԱՊԵՏՅԱՆԻՆ — ռադիո-հեռագրիչ,

Գ.Ա.ԲՐԻԵԼՅԱՆԻՆ — էլեկտրիկ,

Գ.Ա.ՍՊԱՐՅԱՆԻՆ — կապավոր,

Ա.Վ.Ա.ԳՅԱՆԻՆ — հետախույզ,

Մ.Ա.ԶՄԱՆՅԱՆԻՆ — գնդացրորդ,

Դ.Ա.ՎԹՅԱՆԻՆ — զրահահար,

Բ.Ա.ԲԱ.ԶՅԱՆԻՆ — ավտոմատավոր,

Բ.Ա.ԴԱ.ՅՅԱՆԻՆ — ականաձիգ:

Ահա թե ինչպես է կյանքը անխախտ ու
հաստատապես պատասխանում՝ նրանց, ովքեր
մի ժամանակ ցարական նավատորմից հեռու էին
պահում «ծովային ծառայությանը շարժարված»
հայերին:

4. Այս նույն համառոտ թվարկությունը
ցույց է տալիս, որ մեր նավատորմի շարքերում՝
ծառայության հիերարխիայի ցանկացած աստի-
ճաններում՝ շարքային նավատորմայիններից, ա-
վագից սկսած մինչև բոլոր կարդի սպանները,
կան հայեր:

Փորձված հին զինվորներն ու ծառայությունը դեռ նոր սկսող երիտասարդությունը գվարդիական թե սովորական զորամասերում, նրանք միշտ և ամենուրեք գնում են առաջին շարքերում, ետ չմնալով իրենց ոռւս ընկերներից:


Ահավասիկ մեր համառոտ հետևությունները՝ հիմնված ճշգրիտ փաստերի, ժլատ և թերի նյութի վրա:

Մրանք ունեն իրենց պատմական ու գեղեցիկ օրինաշափությունը, որ հնարավոր է միայն մեր երկրում, սոցիալիզմի երկրում, որին առաջնորդում է ժողովուրդների հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինը:

Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը, որն ավելի և ամրապնդված է համատեղ թափված արյամբ, միանաբար նվաճված հաղթանակով՝ նորանոր աննախընթաց հորիզոններ է բացում, ցույց է տալիս ավելի և լուսավոր ապագայի, հետագա խաղաղ շրջանի լայնարձակ ուղին:

Սակայն այդ խաղաղությունը պետք է պահպանել, իսկ հարկ եղած դեպքում՝ պաշտպանել ամեն տեսակ ոտնձգությունից:

Ուստի պետք է կարծել, որ Հայաստանի ծովայինների մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին՝ լավ հիմք կծառալի, որպեսզի շթուղանա հայերի ձգումը հետագայում ևս մըրապնդելու «մեր մեծ Հայրենիքին արժանի ծովային և օվկիանոսային հզոր նավատորմը» (Մոլոտով):



Թարգմանեց՝ Մ. ԶԱԲՈՐՅԱՆ
Թարգմ. Խմբագիր՝ Հ. ՊԱՐՈՒՅՐԱՆ

Վ. 00362. պատ 17: Տիրաժ 3000: 1 $\frac{3}{4}$ մ.: Հեղինակային 11 $\frac{1}{2}$ Ժ.
Ստորագրված է տպագրության 5/II 1946 թ.:

ՀՍՍՌ ԺԿՍ-ին կից Պոլիգրաֆիայի և հրատարակչությունների Վարչության № 3 տպարտն, Երևան, 1946 թ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043278

[124]
9/4
A 6951